Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿԱՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի հետ կապված
ՀՀ վարչապետի 02.02.2009թ. թիվ 02/01.5/601-09 հանձնարարականի համաձայն լրացուցիչ
ներկայացվող տեղեկությունների և փաստաթղթերի մասին

Հ/Հ	*Հանձնարարականով պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը*	***«ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի դատարանի շենքի կառուցում», No. JR2/W2/015 պայմանագրի մրցույթի վերաբերյալ***
1.	**Ծրագրի կառավարման խորհրդի նիստի արձանագրությունը**	Կառավարման խորհրդի 01.12.2010թ. կայացած նիստի թիվ 89-10 արձանագրության քաղվածքը կցվում է, առդիր՝ 1 էջ
2.	**Մրցույթին դիմաց ընկերությունների, կարճ ցուցակում ներառված ընկերությունների և հայտեր ներկայացրած ընկերությունների ցանկերը**	Տվյալ մրցույթի կանոններով կարճ ցուցակ չի կազմվում և մրցույթը բաց է բոլոր շահագրգիռ և իրավասու կազմակերպությունների համար: Միրցույթին դիմած կազմակերպությունների ցանկ. - *«Շինաշխարհ» ՄՊԸ,* - *«Առվա երկիր» ՄՊԸ,* - *«Մեծն Էրիկ» ՄՊԸ,* - *«Բաղրամյանշին» ԲԲԸ* - *«Ախուրյանի կոռպշին» ՄՊԸ* Հայտեր ներկայացրած ընկերությունների ցանկ. - *«Մեծն Էրիկ» ՄՊԸ,* - *«Բաղրամյանշին» ԲԲԸ* - *«Ախուրյանկոռպշին» ՄՊԸ*
3.	**Հայտ ներկայացրած ընկերությունների տեխնիկական առաջարկների գնահատականները**	Տվյալ մրցույթի կանոններով տեխնիկական առաջարկի գնահատում չի իրականացվում, սակայն հայտերը գնահատվում են մրցույթի պայմաններին և որակավորման նվազագույն պահանջներին էապես բավարարելու իմաստով: Նման գնահատման արդյունքում պարզվել էմ որ հետևյալ կազմակերպությունների հայտերը մրցույթով սահմանված որակավորման պահանջներին էապես բավարարում են: - *«Մեծն Էրիկ» ՄՊԸ,* - *«Ախուրյանի կոռպշին» ՄՊԸ* «Բաղրամյանշին» ԲԲԸ հայտը որակազրկվել է, քանի որ տվյալ կազմակերպությունը իր հայտում ներկայացրել է կեղծ և անարժանահավատ տեղեկություններ՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում առկա դրամական միջոցների վերաբերյալ, ինչը չի հետագայում պարզվել է «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ վարչության նախագահի կողմից ներկայացված պաշտոնական գրությամբ: Բացի դրանից, անարժանահավատ տեղեկություններ են ներկայացվել նաև ընկերության կողմից կատարված աշխատանքների ծավալների վերաբերյալ, ինչը իրականում չի բավարարում նվազագույն որակավորման պահանջներին: Հայտը որակազրկելու վերաբերյալ համապատասխան տեղեկություններ են ներկայացվել Համաշխարհային բանկ:
4.	**Ընկերությունների կողմից ներկայացված ֆինանսական առաջարկի գինը և նախագծա-նախահաշվային փաստաթղթերով ներկայացված գինը**	Ընկերությունների կողմից ներկայացված ֆինանսական առաջարկի գինը. Խումբ 1. Որակավորման բոլոր պահանջներին **էապես չբավարարող** ընկերությունների առաջարկները առանց թվաբանական սխալները ուղղելու՝ - *«Բաղրամյանշին» ԲԲԸ՝ 451,357,556 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ* Խումբ 2. Որակավորման բոլոր պահանջներին **էապես բավարարող** ընկերությունների առաջարկները թվաբանական սխալները ուղղելու արդյունքում՝

		- *«Մեծն Էրիկ» ՍՊԸ՝ 593,704,738 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ* - *«Ախուրյանի կոռպշին» ՍՊԸ՝ 599,553,814ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ* Նախագծա-նախահաշվային փաստաթղթերով անկախ փորձաքննությամբ հաստատված գինը. **578,134,330 ՀՀ դրամ** */կազմված է հունիս 2010թ./*
5.	**Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակած և նախագծի տեխնիկական փորձաքննություն անցկացրած կազմակերպությունների անվանումները**	Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը մշակած կազմակերպության անվանումը՝ *«Ռամեդյան» ՍՊԸ* Նախագծի տեխնիկական փորձաքննություն անցկացրած կազմակերպության անվանումը: *«Արտագերատեսչական փորձաննություն» ՓԲԸ*
6.	**Լրատվական միջոցներում տեղադրված մրցույթի հայտարարության տեքստը**	*«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 15.09.2010թ. համարում տեղադրված հայտարարության լուսապատճեն կցվում է:*
7.	**Օտարերկրյա պետությունների և վարկատու կազմակերպությունների կողմից մրցույթի արդյունքները հավանության արժանացման վերաբերյալ գրությունը**	Ըստ ծրագրի գնումների պլանի տվյալ մրցույթի արդյունքները ենթակա են Համաշխարհային բանկի կողմից նախնական հավանության: Այդ իսկ պատճառով սկզբից մրցութային փաստաթղթերի նախագիծը, իսկ հետո նաև մրցույթի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացվել է Համաշխարհային բանկի հաստատմանը: Տվյալ մրցույթի արդյունքները սահմանված կարգով հաստատվել են նաև Համշխարհային բանկի կողմից /կցվում է/:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԾԻԳ» ՊՀ

Դեկտեմբեր 2010թ.